## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. փոստ՝ proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏ 2016թվականի N 8

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21 -Ի ԹԻՎ 3_ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Պռոշյան համայնքի ավագանու թիվ 3-րդ հերթական նիստի օրակարգը բաղկացած հետևյալ հարցերից.

1) Պռոշյան համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու և <<Փըրֆեքթ աուդիտ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության աուդիտորական եզրակացության արդյունքներին ծանոթանալու մասին
2) Պռոշյան համայնքի ղեկավարի 2016 թվականի կամավոր լիազորությունների իրականացման մասին
3) Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 4 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4) Պռոշյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ջրագիծն <<Երևան Ջուր>> փակ բաժնետիրական ընկերությանը հատկացնելու մասին
5) Պռոշյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքից <<ՀԷՑ>> փակ բաժնետիրական ընկերությանը հողատարածք հատկացնելու մասին

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
6. ԵՆՈՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. փոստ՝ proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏԻ 2016թվականի N 9 -Ն

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ <<ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 32-րդ կետերի ու 69-րդ հոդվածի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Պռոշյան համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը/համաձայն հավելվածի/:
2. Ի գիտություն ընդունել <<Փըրֆեքթ աուդիտ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության աուդիտորական եզրակացության արդյունքները/համաձայն հավելվածի/:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ
2. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՂՈՒԿԱՍ
5. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ԵՆՈՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի 2015թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների աուդիտ
մարտ 2016թ.

# ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք իրականացրել ենք Պռոշյան համայնքի 2015թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների աուդիտ տարեվերջի դրությամբ:

Այդ հաշվետվությունների կազմման պատասխանատվությունը կրում է համայնքի ղեկավարությունը:

Մենք կրում ենք պատասխանատվություն մեր կարծիքի արտահայտման համար՝ նշված հաշվետվության վերաբերյալ անցկացված աուդիտի հիման վրա:

Աուդիտն իրականացվել է աուդիտի միջազգային ստանդարտների համընդհանուր չափանիշներին համապատասխան: Այդ չափանիշները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ տարեկան հաշվետվություններում: Աուդիտը փորձարկումների հիման վրա ընդգրկում է այն ինֆորմացիայի ստուգումը, որը հավաստիացնում է տարեկան հաշվետվություններում հանդիպող որևէ թվերի կամ տվյալների ճշգրտությունը: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, ինչպես նաև ֆինանսական և հաշվապահական աշխատանքների պատասխանատուների հարցումը: Մենք համարում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

*Չձևափոխված կարծիք*

Մեր կարծիքով, Պռոշյան համայնքի 2015 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը բոլոր էական դրույթներով ճիշտ է արտացոլում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը 2015թվ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ և համապատասխանում է հաշվապահական հաշվառման վարման ընդունված սկզբունքներին:

21 մարտ, 2016թ.

Հարգանքով՝

Տնօրեն՝ Ա. Բաբայան

աուդիտոր՝ Ա. Հարությունյան

Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի 2015թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների աուդիտ
մարտ 2016թ.

Համայնքի 2015թ. բյուջեն եկամուտների մասով 122,433.0 հազար դրամ և ծախսային մասով 145,210.5 հազար դրամ հաստատվել է 2014թ. դեկտեմբերի 22-ի ավագանու նիստի N32-Ն որոշմամբ:

Պռոշյան համայնքի 2015թ. բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ եկամուտների գծով

հազար դրամ

| Հոդվածների անվանումը | Եկամուտների պլան | Ճշտված պլան | փաստացի մաս | Շեղում գումարով | | կատարողական |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | + | - | % |
| **1. Հարկային եկամուտ** | **34,255.50** | **30,255.50** | **28,040.23** | | **-2,215.27** | **92.68** |
| ա) հողի հարկ | 11,000.50 | 9,000.50 | 8,560.79 | | -439.71 | **95.11** |
| բ)գույքահարկ | 21,400.00 | 19,400.00 | 17,611.69 | | -1,788.31 | **90.78** |
| գ)տուրքեր | 1,855.00 | 1,855.00 | 1,867.75 | 12.75 | | **100.69** |
| **2. Պաշտոնական դրամաշնորհներ** | **82,677.50** | **82,677.50** | **82,654.50** | | **-23.00** | **99.97** |
| ա)Դոտացիա | 82,677.50 | 82,677.50 | 82,654.50 | | -23.00 | **99.97** |
| բ)սուբվենցիա | | | | | | |
| **3.Այլ եկամուտներ** | **5,500.00** | **5,500.00** | **6,404.48** | **904.48** | | **116.45** |
| ա)Վարձակալությամբ տրված հողերից վարձ | 800.00 | 800.00 | 894.85 | 94.85 | | **111.86** |
| բ)վարչական գանձումներից | 1,200.00 | 1,200.00 | 894.60 | | -305.40 | **74.55** |
| գ )իրավական ակտերից | 3500 | 3500 | 4615.03 | 1115.03 | | **131.86** |
| Ընդամենը | **122,433.00** | **118,433.00** | **117,099.21** | | **-1,333.79** | **98.87** |

Պռոշյան համայնքի 2015թ. բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

հազար դրամ

| Հոդվածների անվանումը | Ծախսերի պլան | Ճշտված պլան | փաստաց ի մաս | Շեղում գումարով | | կատարո ղական |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | + | - | % |
| 1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 65,563.54 | 66,493.54 | 60,763.63 | | -5,729.91 | **91.38** |
| 2.Պաշտպանություն | 300 | 300 | | | -300 | **0.00** |
| 3.հասարակական կարգ | 300 | 300 | 100 | | -200 | **33.33** |
| 4.տնտեսական հարաբերություններ | -32,061.70 | -32,561.70 | -5,107.09 | 27,454.61 | | **15.68** |
| 5. Շրջական միջավայրի պաշտպանություն | 16,950.00 | 16,950.00 | 5,448.60 | | -11,501.40 | **32.15** |
| 6.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | 18,800.00 | 18,800.00 | 12,454.68 | | -6,345.32 | **66.25** |
| 7.Առողջապահություն | 0 | 0 | 0 | | | |
| 8.Հանգիստ, մշակույթ և կրոն | 27,237.00 | 24,737.00 | 10,617.88 | | -14,119.12 | **42.92** |
| 9.կրթություն | 32,000.00 | 36,000.00 | 35,240.00 | | -760.00 | **97.89** |
| 10.սոցիալական պաշտպանություն | 10,000.00 | 10,000.00 | 9,935.00 | | -65.00 | **99.35** |
| 11.Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | 6,121.70 | 191.7 | | | -191.7 | **0.00** |
| **Ընդամենը** | **145,210.54** | **141,210.54** | **129,452.70** | | **-11,757.84** | **91.67** |

Ծախսերը եկամուտների նկատմամբ կազմել է 110.5 %:

Բյուջետային միջոցների ազատ մնացորդը 31.12.2015թ. կազմել է 12,353.5 դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. փոստ՝ proshyan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏԻ 2016թվականի N 10

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի բյուջեով նախատեսած ֆինանսական միջոցների շրջանակներում 2016 թվականի ընթացքում համայնքում իրականացնել հետևյալ կամավոր լիազորությունները՝
   1) Տեղերաշեն, Կամոյի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ.
   2) Երևանյան, Խանջյան, ԳԱՄ, Մայիսյան և Թումանյան փողոցների փոսալցման և բարեկարգման աշխատանքներ
   3) Թումանյան, Մայիսյան, Տերյան փողոցների լուսավորման աշխատանքներ
   4) Պռոշյան համայնքի փողոցների բարեկարգման, փոսալցման և ասֆալտապատման, լուսավորության նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
6. ԱՐԹՈՒՐ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե՝proshyan.kotayq@mta.gov.am, Proshyan2413@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏ 2016 թվականի N 11

### ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պռոշյան համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 11-ի << Պռոշյան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> թիվ 4 որոշման մեջ <<Արմենուհի Մելիքյան>> բառերը փոխարինել <<Սուսաննա Գաբրիելյան>> բառերով և <<Սևակ Գաբրիելյան>> բառերը փոխարինել <<Լուսինե Սահակյան>> բառերով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Պետրոսյան Մարիամ
2. Հարությունյան Անդրանիկ
3. Մկրտչյան Ղուկաս
4. Սահակյան Արտաշես
5. Մովսիսյան Արմեն
6. Ենոքյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
էլ. փոստ՝ proshyan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏ 2016թվականի N 12

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍՑՈՂ ՋՐԱԳԻԾԸ <<ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Գ. Սարոյանի 2016 թվականի մարտի 3-ի թիվ 03/08/424-16 գրությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պռոշյան համայնքի սեփականություն հանդիսացող(սեփականության վկայական N20062014-07-0032) նոր թաղամասի՝ 5-րդ փողոցի ջրամատակարարման համար կառուցված 1165 գծամետր ջրագիծն անժամկետ անհատույց շահագործման նպատակով հանձնել <<Երևան Ջուր>> Փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
6. ԵՆՈՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. փոստ՝ proshyan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՐՏ 2016թվականի N 13

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՑ <<ՀԷՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,2-րդ մասի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի 5-րդ փողոցի բնակչության էլեկտրամատակարարման բարելավման նպատակով, Պռոշյան համայնքի 07-053-0020-0026 ծածկագրով հողամասից 0.0012 հա տարածք անժամկետ անհատույց օգտագործման նպատակով տրամադրել <<ՀԷՑ>> Փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ
2. ՄԿՐՏՉՅԱՆ ՂՈՒԿԱՍ
3. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
6. ԱՐԹՈՒՐ ԵՆՈՔՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ